ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2026 թվականի N 520 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 532-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 532-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետում, որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) վերնագրում և ամբողջ տեքստում «2024-2026» թվերը փոխարինել «2024-2029» թվերով.

2) հավելվածի 10-րդ կետը «ներառում են» բառերից հետո լրացնել «առնվազն» բառով, «1000 մ^2» բառերը փոխարինել «1050 մ^2» բառերով, իսկ «(±10% շեղումով)» բառերը հանել.

3) հավելվածի 18-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ծրագրով կանխատեսվում է 2024-2029 թվականներին հիմնել 18 խեցգետնաբուծարան, որից՝ 10 փոքր, 5 միջին և 3 խոշոր, որոնց փոխհատուցման գումարը կկազմի 960435 հազար ՀՀ դրամ:».

4) հավելվածի 22-րդ կետում «2025 թվականի նոյեմբերի 1-ին» բառերը փոխարինել «2028 թվականի դեկտեմբերի 1-ին» բառերով, որից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«2024-2028 թվականներին նախարարություն դիմում-հայտեր ներկայացրած, սակայն սահմանված ժամկետում փաստաթղթերի փաթեթի ոչ ամբողջական լինելու հանգամանքով պայմանավորված՝ շահառու չհանդիսացած իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից խեցգետնաբուծական համալիր ձեռք բերելու վերաբերյալ ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը նախարարությունն ուսումնասիրում է սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով:».

5) հավելվածի 24-րդ կետի 4-րդ ենթակետը «չօտարել» բառից հետո լրացնել «խեցգետնաբուծական համալիրը» բառերով.

6) հավելվածի 26-րդ կետի «Ծախսերի» բառը փոխարինել «Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության պարագայում ծախսերի» բառերով.

7) հավելվածի 27-րդ կետը «Մինչև փոխհատուցումը» բառերից հետո լրացնել «դիմումատուն պետք է ներկայացնի հաշիվ-վավերագիր կամ հարկային հաշիվ, հանձման-ընդունման ակտ և վճարման անդորրագրեր, որոնք ուսումնասիրելուց հետո» բառերով.

8) հավելվածի 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«31. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024-2029 թվականներին, որի շրջանակներում հնարավորություն կընձեռվի Հայաստանի Հանրապետությունում հիմնելու 18 խեցգետնաբուծական համալիր, ինչը թույլ կտա արհեստական եղանակով խեցգետնի արտադրության ծավալներն ավելացնելու ավելի քան 174 տոննայով: Ծրագրի իրականացման համար կանխատեսվող ֆինանսական միջոցներն ըստ տարիների ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տարիները		**2024 թ.**	**2025 թ.**	**2026 թ.**	**2027 թ.**	**2028 թ.**	**2029 թ.**	**Ընդամենը**
Հիմնադրվող խեցգետնաբուծական համալիրների քանակը, միավոր	փոքր	-	-	-	2	4	4	10
	միջին	-	-	2	1	1	1	5
	խոշոր	-	-	-	1	1	1	3
Փոխհատուցման համար անհրաժեշտ գումարը (հազար դրամ)		-	-	**129900**	**228845**	**300845**	**300845**	**960435**

».

9) հավելվածի 33-րդ կետի 3-րդ ենթակետում «162» թիվը փոխարինել «174» թվով, «1 մլրդ 620 մլն» բառերը փոխարինել «1 մլրդ 740 մլն» բառերով, իսկ 6-րդ ենթակետում «65» թիվը փոխարինել «68» թվով.

10) հավելվածի Աղյուսակ 2-ի 6-րդ կետում «1000» թիվը փոխարինել «1050» թվով:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և լրացում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է մինչև 2029 թվականի դեկտեմբերի 30-ը:

4. Փաստաթղթերի ընդունման ժամկետը սահմանվում է սույն որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.04.2026

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ